ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
պարոն Դավիթ Հարությունյանին

պատճենը՝
Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի տնօրեն
տիկին Լաուրա Բեյլիին

պատճենը՝
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի տնօրեն
տիկին Քարեն Հիլիարդին

24.02.2016թ.

Հարգելի պարոն Հարությունյան,

սույն թվականի փետրվարի 12-ին ԱԾԹՆ հարցերով հետաքրքրված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից Ձեզ ուղղված նամակին ի պատասխան դիրքորոշում եք հայտնել, որ նախքան Բազմաշահագրգիռ կողմերի խմբի (ԲՇԽ) կողմից իր աշխատակարգի և հետագա որոշումների կայացման մեխանիզմների հաստատումը, կարող է կիրառվել որոշումների կայացման ոչ թե կոնսենսուսային, այլ՝ քվեարկության մեխանիզմ:

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության կողմից ԲՇԽ 15 տեղերից քաղաքացիական հասարակությանը տրամադրված է ընդամենը 5 տեղ՝ քվեարկության միջոցով որոշումների կայացման պարագայում քաղաքացիական հասարակության անդամները չեն կարող պատշաճ կերպով ԲՇԽ-ում ներկայացնել հանրության կարծիքը: Համարում ենք, որ այսօրինակ համամասնության պայմաններում, ԲՇԽ շրջանակներում ընդունվող կարևոր որոշումները պետք է ընդունվեն կոնսենսուսով:

Անշուշտ, ԱԾԹՆ-ը միջազգային կարևոր մեխանիզմ է բնական պաշարների շահագործման ոլորտի թափանցիկության և պատասխանատու գործունեության նկատմամբ բազմակողմանի վերահսկողություն իրականացնելու համար: Այնուհանդերձ, եթե քաղաքացիական հասարակությունը չունենա հավասար գործիքներ արդյունավետ կերպով գործընթացին ներգրավվելու համար, ապա խմբի գործունեությունը կդառնա անարդյունավետ և ինքնանպատակ: Այդ գործիքներից հիմնականը որոշումների ընդունման գործընթացի կոնսենսուսային եղանակն է, որը պետք է հստակ ամրագրել նախքան ԲՇԽ-ի ձևավորումը:

Հարկ է նշել նաև, որ մեր մոտեցումը բխում է ԱԾԹՆ Միջազգային Քարտուղարության դիրքորոշումից, որն արտահայտված է «Բազմաշահագրգիռ կողմերի խմբերի ձևավորման

և կառավարման վերաբերյալ 14-րդ» ուղեցույցում: Համաձայն նշված ուղեցույցի, «Կոնսենսուսի միջոցով որոշումների կայացումը բազմաշահառու գործընթացի առանցքային բաղադրիչ է, և Միջազգային Քարտուղարությունն առաջարկում է գործադրել բոլոր ջանքերը, որպեսզի ԲՇԽ-ում որոշումները կայացվեն կոնսենսուսի միջոցով»: Ավելին, նույն ուղեցույցում ասվում է, որ «Չնայած կոնսենսուսը բոլոր շահագրգիռ կողմերից պահանջում է ժամանակ, ջանքեր և կամք փոխզիջումների գնալու համար, այնուհանդերձ, դա կարևոր է ԱԶԹՆ հարատև և ներառական գործընթացի համար...: ԱԶԹՆ իրականացման փորձը ցույց է տալիս, որ երբ որոշումները կայացվել են առանց կոնսենսուսի, շահագրգիռ կողմերը կորցրել են ԱԶԹՆ նկատմամբ վստահությունը և ԱԶԹՆ իրականացման գործընթացը վտանգվել է»:

Անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ ԱԶԹՆ հիմնական նպատակը հատկապես քաղաքացիական հասարակության հետ երկխոսության մթնոլորտի ձևավորումն է, և ոչ թե ԲՇԽ անհամաչափ համամասնության միջոցով ձևական որոշումներ կայացնելը:

Կարծում ենք, որ առանց կոնսենսուսի հնարավոր չէ հասնել երկխոսության մթնոլորտի ձևավորմանը, ինչի հետևանքով առաջանում է ԱԶԹՆ գործընթացի ձախողման ռիսկ: Հիմք ընդունելով նաև հարցի վերաբերյալ ԱԶԹՆ Միջազգային Քարտուղարության տեսակետը՝ առաջարկում ենք քննարկել առնվազն ստորև նշված երեք խումբ հարցերի առնչությամբ որոշումները բացառապես կոնսենսուսի միջոցով ընդունելու առաջարկությունը և ԲՇԽ ձևավորման վերաբերյալ փաստաթղթում ամրագրել, որ վերոնշյալ հարցերի շուրջ որոշումներն ընդունվելու են կոնսենսուսով՝

1. ԲՇԽ ներքին Աշխատակարգի, դրանում կատարվող փոփոխությունների և լրացումների հաստատումը՝ այդ թվում ԲՇԽ-ի շրջանակներում աշխատող փորձագետների լիազորությունները՝ որպես ԲՇԽ ներքին Աշխատակարգի բաղադրիչ,
2. ԱԶԹՆ Աշխատանքային ծրագրի, դրանում կատարվող փոփոխությունների և լրացումների հաստատումը,
3. ԱԶԹՆ հաշվետվության, ինչպես նաև ԲՇԽ տարեկան գործունեության հաշվետվությունների հաստատումը:

Ձեզ տեղեկացնում ենք նաև, որ ԱԶԹՆ հարցերով շահագրգիռ հանրությունն արդեն հստակեցրել է ԲՇԽ-ում ներկայացվելիք Հանրային օրակարգը և կանոնակարգել ԲՇԽ կազմում իր անդամների ընտրության գործընթացը: Այդուհանդերձ, ԲՇԽ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ընտրության հարցը շարունակում է մնալ կասեցված, մինչև վերոնշյալ երեք խումբ հարցերի շուրջ որոշումների ընդունման մեխանիզմների հստակեցումն ու քաղաքացիական հասարակության համար սկզբունքային հանդիսացող այս խնդրի կարգավորումը:

Լիահույս ենք, որ Դուք՝ որպես ԱՃԹՆ գործընթացի պատասխանատու, համարժեք քայլեր կձեռնարկեք այս կարևոր միջազգային գործընթացին Հայաստանի արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար:

Հարգանքով՝

ԱՃԹՆ հարցերով հետաքրքրված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ՝

Ինգա Զարաֆյան, ԷկոԼուր տեղեկատվական ՀԿ-ի նախագահ

Վահագն Խաչատուրյան, Տնտեսական, քաղաքական, իրավագիտական հետազոտությունների և կանխատեսումների կենտրոնի տնօրեն

Հարություն Մովսիսյան, Երևանի պետական համալսարանի Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ

Արթուր Գրիգորյան, Էկոիրավունք ՀԿ-ի ղեկավար

Էրիկ Գրիգորյան, Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիաե ՀԿ-ի նախագահ

Արթուր Համբարձումյան, Civil Voice ՀԿ-ի փորձագետ իրավաբան

Կոնտակտային անձ՝
Լենա Նազարյան (crm@aua.am, 093 707985)

[UNOFFICAL TRANSLATION]

Minister - Chief of RA Government Staff
Mr. Davit Harutyunyan

Copy:
World Bank Country Manager in Armenia
Ms. Laura E. Bailey

Copy:
USAID Armenia Mission Director
Ms. Karen R. Hilliard

24.02.2016

Dear Mr. Harutyunyan,

In your February 12, 2016 response to the letter addressed to you by the civil society representatives interested in the Extractive Industries Transparency Initiative (EITI) process in Armenia, you have expressed the position that before confirmation of operational and decision-making procedure of the Multi-Stakeholders Group (MSG), decision-making might be done by voting mechanism instead of consensus.

Considering the fact that the civil society has received only 5 seats from the total 15 provided by the RA Government, in case of making decisions through voting, members of civil society cannot properly represent the civil society position in the MSG. We believe that in the case of this voting-proportion important MSG decisions should be adopted by consensus. Indeed, EITI is an important international mechanism to implement comprehensive control over transparent and responsible activities in the natural-resource governance. However, if civil society does not have equal tools to effectively engage in the process, the MSG will become inefficient and self-serving. One of the main tools is the consensus method of decision making process, which should be clearly fixed before MSG formation.

It should also be noted that our approach is based on the position of the EITI International Secretariat, expressed in the "14th Guide for the Design and Management of MSG". According to this guideline, "Decision-making through a consensus is a key component in the multi-stakeholder working process, and the International Secretariat suggests to make every efforts to adopt decisions in MSG by consensus." Moreover, the same guideline states that "Despite the consensus requires time, effort and a will to compromise from all stakeholders, however, it is important for EITI lasting and inclusive process. EITI implementation experience shows that when decisions were made without consensus, the interested parties have lost credibility and EITI implementation process has been endangered".

It should be clear that the main purpose of EITI is the formation of an atmosphere of dialogue with civil society, and not making formal decisions through the unequal proportion in MSG. We believe that the dialogue cannot be achieved without consensus, and as a result there is a risk of failure of the EITI process.

Based on the above-mentioned EITI International Secretariat guideline, we suggest considering at least the following three groups of decisions that must be done exclusively by consensus. We also suggest that this must be fixed in the MSG formation document.

- **MSG internal working regulations, approval of amendments and supplements thereto, including the scope of work of MSG experts as MSG internal component;**
- **EITI work program, approval of amendments and supplements thereto;**
- **EITI report, as well as approval of the annual activity reports of MSG.**

We also inform you that the civil society members interested in EITI issues have already clarified the Public Agenda and have confirmed the selection procedures of its members in MSG.

However, the selection of civil society representatives in MSG remains suspended until the resolution of fundamental issue related to the decision-making mechanisms of above-mentioned three points.

We hope that you, as the responsible person in RA Government for EITI process, will take appropriate steps to ensure the effective participation of Armenia in this important international process.

Sincerely
Representatives of civil society participating in the discussions on EITI

Inga Zarafyan, "EcoLur" Informational NGO President

Vahagn Khachaturyan, Director "Political, Legal and Economic Researches and forecasting" Center

Harutyun Movsisyan, Expert at Sustainable Development Center, Yerevan State University

Artur Grigoryan, Director of Eco Right NGO

Erik Grigoryan, President of Association of Young Environmental Lawyers and Economists

Artur Hambardzumyan, Expert and Lawyer of Civil Voice

Contact person:
Lena Nazaryan (crm@aua.am, 093 707985)